

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հ. Հ. Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-2/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար

02.09.2021

Տիպ` [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)

Հայտատու` Մրգաստանի համայնքապետարան

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդված

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ. Հ. Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի /ծածկագիր 3.2-2/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար

Առաջին կարգի մասնագետը`

ա/կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով.

բ/իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքներ

գ/ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը.

դ/պատասխանատվություն է կրում համակարգչային մուտքագրման, համայնքապետարանից ելքագրվող, ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար.

ե/ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթեր.

զ/հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականներին համապատասխան ժամկետներում կատարմանը, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին.

է/աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը` անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում.

ը/իրականացնում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող նորմատիվ իրավական ակտերի առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և այլ արխիվացման աշխատանքները.

թ/կիսամյակը մեկ անգամ աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում իր կողմից կատարված պաշտոնի անձնագրով նախատեսված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն.

ժ/առաջին կարգի մասնագետն ունի օրենքով նորմատիվ իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ.

ի/առաջին կարգի մասնագետն իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է`

Միջնակարգ կրթություն

Ունի ՀՀ <<Սահմանադրության>>, <<Համայնքային ծառայության>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2021թ. հոկտեմբերի 7-ին, ժամը 14:00-ին, Մրգաստանի համայնքապետարանի շենքում:

Դիմող՝ Զ. Զ. քաղաքացիները աշխատակազմ կամ Զ.Զ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-Դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս/

-Կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ /պատճենը/

-Աշխատանքային գրքույկ /պատճենը առկայության դեպքում/

-Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին:

-Արական սեռի անձինք զինգրքույկ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր ու զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը, բնօրինակի հետ կամ համապատասխան տեղեկանք:

-Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Զ. Զ. կառավարության 2019թ. փետրվարի 15-ի N 98-Ա որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

-Տեղեկանք ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից, որ նշված անձը նախկինում դատապարտված չի եղել, հետախուզման մեջ չի գտնվում և նրա վերաբերյալ ոստիկանությունում վարկաբեկիչ նյութեր չկան:

-Երկու լուսանկար 3x4 չափսի:

-Անձնագիր և անձնագրի պատճենը:

-Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից ժամը 10:00-ից-18:00-ն:

-Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2021թ. սեպտեմբերի 23-ը, ժամը՝ 18:00-:

Մրցույթին մասնակցել ցանկացող Զ. Զ. քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել՝ Զ. Զ. Արմավիրի մարզ Մրգաստանի համայնքապետարան /հեռ. 0231-6-38-10, Մրգաստան 3/15 հասցեով/ կամ Զ. Զ. Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն:/հասցե Աբովյան փ. 71 հեռ. 0237 2-07-70, 2-76-49/

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Մրգաստան 3 փողոց, 15 շենք

Հեռ.՝ 0231-6-38-10

Էլ. փոստ՝ rkachatryan@mail.ru